Հայտարարություն

«Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է Մրցույթ՝ հետևյալ առարկաների և մասնագիտական մոդուլների մանկավարժական աշխատողների /դասախոսների/ թափուր տեղերը համալրելու՝

1. «Գերմաներեն լեզու», ծանրաբեռնվածությունը՝ 768 ժամ
2. «Կենսաբանություն», ծանրաբեռնվածությունը՝ 300 ժամ
3. «Ֆիզիկական կուլտուրա», ծանրաբեռնվածությունը՝ 200 ժամ

Նշված առարկաները կարող է դասավանդել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

1. «Մեխանիկա», ծանրաբեռնվածությունը՝ 250 ժամ
2. «Տնտեսագիտություն», ծանրաբեռնվածությունը՝ 576 ժամ
3. «Ագրոնոմիա», ծանրաբեռնվածությունը՝ 250 ժամ

Նշված մասնագիտություններում ընդգրկված մասնագիտական ուսումնական մոդուլները կարող է դասավանդել այն անձը, որը ստացել է դասընթացի բնույթին համապատասխանող միջին մամասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է:

Դասախոսի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթուրյան մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4)
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում

համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.

8) Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) Գիտական աստիճանը, գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
10) Ըստ պաշտոնի հավակնորդի հայեցողության՝ գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը բնօրինակներով), ներկայացնել 2026 թ. օգոստոսի 4-ից մինչև օգոստոսի 17-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 13:00-ն (բացի շաբաթ, կիրակի և հանգստյան օրերից), «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի մրցույթաի հանձնաժողովին

(հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզի գ. Արգելի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոց):

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 19-ին՝ ժամը 11:00-ին, Կոտայքի մարզի «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ում:

Մանրամասների համար զանգահարել հեռ. 099 32 35 45, 077 15 88 27

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ